# ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԵՎ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ

## Առևտրային կազմակերպությունների պետական գրանցում

| ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ | ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ | ԺԱՄԿԵՏ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ | ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|
| **Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պետական գրանցում**<br>**Բաժնետիրական ընկերության պետական գրանցում**<br>**Արտադրական կոոպերատիվի պետական գրանցում**<br>**Լիակատար ընկերակցության պետական գրանցում**<br>**Գյուղատնտեսական կոոպերատիվի պետական գրանցում** | Պետական տուրք չի գանձվում | Երկու աշխատանքային օր, բացառությամբ՝ երբ դիմողն օգտվում է օրենով նախատեսված փաստաթղթերի նմուշային ձևերից: Վերջինիս դեպքում գրանցումն իրականացվում է անմիջապես:<br><br>1) դիմում.<br>2) իրավաբանական անձ հիմնադրելու մասին հիմնադիրների որոշումը կամ հիմնադիր ժողովի (համագումարի կամ օրենքով սահմանված այլ մարմնի) արձանագրությունը՝ ստորագրված բոլոր հիմնադիրների կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ ժողովի նախագահի և քարտուղարի կողմից.<br>3) իրավաբանական անձի կանոնադրությունը՝ հաստատված հիմնադրի (հիմնադիրների) կամ հիմնադիր ժողովի (համագումարի կամ օրենքով սահմանված այլ մարմնի) կողմից.<br>4) տեղեկություններ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կամ նրա ժամանակավոր պաշտոնակատարի վերաբերյալ՝ անձնագրային տվյալները և սոցիալական քարտի համարը կամ նշում անձի՝ սոցիալական քարտից հրաժարվելու մասին և համապատասխան տեղեկանքի համարը, էլեկտրոնային փոստի հասցեն.<br>5) իրական շահառուների վերաբերյալ հայտարարություն<br>6) մեկ անձի կողմից իրավաբանական անձի հիմնադրման դեպքում 2-րդ կետով նախատեսված փաստաթղթի փոխարեն ներկայացվում է հիմնադրի միանձնյա գրավոր որոշումը:<br>(այս կետում այսուհետ՝ Փաստաթղթեր) | Եթե անձը փաստաթղթերը գործակալություն ներկայացնելիս օգտվում է օրենքով նախատեսված փաստաթղթերի նմուշային ձևերից, ապա համապատասխան փաստաթղթերը ներկայացնելու պահանջը համարվում է կատարված, երբ անձը գործակալություն է ներկայացնում նմուշային ձևերը լրացնելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը, և փաստաթղթերը ստորագրվում են օրենքով նախատեսված համապատասխան անձանց կողմից: Նշված փաստաթղթերը ստորագրելով՝ անձինք անվերապահորեն հրաժարվում են գործակալության, ՀՀ արդարադատության նախարարության կամ ՀՀ նկատմամբ փաստաթղթերի ձևակերպումների և բովանդակության վերաբերյալ որևէ պահանջ ներկայացնելու իրավունքից:<br><br>Եթե անձը համացանցում գործակալության պաշտոնական կայքի միջոցով փաստաթղթերն անմիջապես տեղեկատվական համակարգ ներմուծելիս օգտվում է օրենով նախատեսված փաստաթղթերի նմուշային ձևերից, ապա փաստաթղթեր ներկայացնելու պահանջը համարվում է պատշաճ կերպով կատարված, երբ անձը գործակալության պաշտոնական |

| | | | |
|---|---|---|---|
| | | Եթե հիմնադրման միջոցով ստեղծված իրավաբանական անձի հիմնադիրների կազմում առկա է ՀՀ իրավաբանական անձ, ապա, ի հավելումն Փաստաթղթերի, անհրաժեշտ է ներկայացնել հիմնադիր իրավաբանական անձի կառավարման լիազորված մարմնի որոշումը և տեղեկատվություն հիմնադիր իրավաբանական անձի վերաբերյալ՝ իրավաբանական անձի անվանումը և պետական գրանցման համարը: Սույն մասում նշված տեղեկությունը չի ներկայացվում, եթե հիմնադիրը պետություն կամ համայնք է:<br>1) Եթե հիմնադրման միջոցով ստեղծված իրավաբանական անձի հիմնադիրը օտարերկրյա իրավաբանական անձ է, ապա պետական գրանցման համար, նախատեսված Փաստաթղթերից բացի, ներկայացվում է նաև քաղվածք՝ տվյալ երկրի առևտրային գրանցամատյանից, կամ օտարերկրյա իրավաբանական անձի իրավական կարգավիճակը հաստատող այլ համազոր փաստաթուղթ և նրա հիմնադիր փաստաթղթերը (կամ համապատասխան քաղվածքները)՝ վավերացված և հայերեն թարգմանված:<br><br>Եթե հիմնադրման միջոցով ստեղծված իրավաբանական անձի հիմնադիրը օտարերկրյա ֆիզիկական անձ է, ապա պետական գրանցման համար, նախատեսված Փաստաթղթերից բացի, ներկայացվում է տվյալ անձի անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի պատճենը՝ վավերացված և հայերեն թարգմանված:<br><br>Այլ մարմնի կողմից գրանցված իրավաբանական անձի վերագրանցման կամ իրավաբանական անձի մասին սույն օրենքով սահմանված տեղեկությունները գրանցամատյանում գրառելու դեպքում, նախատեսված Փաստաթղթերից բացի, իրավաբանական անձը ներկայացնում է նաև գրանցող մարմնի տված պետական գրանցման վկայականի (պետական գրանցման մասին որոշման կամ պետական գրանցումը հավաստող այլ փաստաթղթի) և հիմնադիր փաստաթղթերի բնօրինակները:<br><br>Առանձին կազմակերպական-իրավական ձև ունեցող իրավաբանական անձանց վերաբերյալ հատուկ օրենքներով կարող են նախատեսվել նաև պետական գրանցման համար | կայքի միջոցով անմիջապես տեղեկատվական համակարգում լրացնում է անհրաժեշտ տեղեկատվությունը, և օրենքով նախատեսված համապատասխան անձինք հաստատում են ներկայացված փաստաթղթերը էլեկտրոնային ստորագրությունների միջոցով: Նշված փաստաթղթերը ստորագրելով՝ անձինք անվերապահորեն հրաժարվում են գործակալության, ՀՀ արդարադատության նախարարության կամ ՀՀ նկատմամբ փաստաթղթերի ձևակերպումների կամ բովանդակության վերաբերյալ որևէ պահանջ ներկայացնելու իրավունքից: |

| | | | |
|---|---|---|---|
| | | պարտադիր ներկայացման ենթակա այլ փաստաթղթեր: | |
| **Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փոփոխությունների պետական գրանցում** | | | |
| 1. **Կանոնադրության փոփոխության պետական գրանցում** (այդ թվում պայմանավորված՝<br>1) անվանման,<br>2) մասնակցի,<br>3) մասնակցի տվյալների,<br>4) իրավաբանական հասցեի,<br>5) կանոնադրական կապիտալի և այլ փոփոխություններով) | 10000 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160719) | Երկու աշխատանքային օր<br>1) դիմում,<br>2) կանոնադրության փոփոխությունները, լրացումները կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին իրավասու մարմնի որոշումը,<br>3) կանոնադրության փոփոխությունները կամ լրացումները (կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը),<br>4) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ:<br><br><<Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի 66-րդ հոդվածով սահմանված դեպքերում ներկայացվում են նաև նշված հոդվածով նախատեսված փաստաթղթերը (իրական շահառուների վերաբերյալ հայտարարություն): | Կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում դիմողը ներկայացնում է նաև ներդրումը հավաստող փաստաթղթերը: |
| 2. **Մասնակիցների փոփոխության պետական գրանցում** | 10000 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160719) | Երկու աշխատանքային օր<br><br>1) դիմում, որը պետք է պարունակի նոր մասնակիցների մասին տեղեկություններ՝ անձնագրային տվյալները՝ ֆիզիկական անձի դեպքում, կամ գրանցման համարը՝ ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձի դեպքում,<br>2) բաժնեմասի կամ դրա մասի օտարման հիմքը (պայմանագիր, դատարանի վճիռ և այլն),<br>3) ընկերության տնօրենի գրավոր հավաստումը ընկերության մասնակիցների նախապատվության իրավունքի (դրա առկայության դեպքում) իրականացման՝ օրենքով և ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգը պահպանելու մասին: Եթե ընկերության մասնակցի բաժնեմասը փոխանցվում է նոտարական կարգով վավերացված պայմանագրով, ապա սույն մասում նշված հավաստումը չի ներկայացվում, | Եթե բաժնեմասի սեփականատեր պետք է դառնա օտարերկրյա իրավաբանական անձ, ապա, ի հավելումն վերը նշված փաստաթղթերի՝ նաև քաղվածք տվյալ երկրի առևտրային գրանցամատյանից, կամ օտարերկրյա իրավաբանական անձի իրավական կարգավիճակը հաստատող այլ համազոր փաստաթուղթ և նրա հիմնադիր փաստաթղթերը (կամ համապատասխան քաղվածքները)՝ վավերացված և հայերեն թարգմանված:<br><br>Եթե բաժնեմասի սեփականատեր պետք է դառնա օտարերկրյա ֆիզիկական անձ, ապա պետական գրանցման համար, վերը նշված փաստաթղթերից բացի՝ տվյալ անձի |

| | | | |
|---|---|---|---|
| | | 4) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ: | անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի պատճենը՝ վավերացված և հայերեն թարգմանված: |
| 3. **Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխության պետական գրանցում** | 10000 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160719) | Երկու աշխատանքային օր<br><br>1)դիմում,<br>2)իրավաբանական անձի լիազորված մարմնի որոշումը (որոշումները) պետական գրանցում ստացած գործադիր մարմնի նախկին ղեկավարի լիազորությունները դադարեցնելու և գործադիր մարմնի նոր ղեկավար նշանակելու մասին,<br>3)գործադիր մարմնի նոր ղեկավարի մասին տեղեկություններ՝ անունը, ազգանունը և անձնագրային տվյալները, սոցիալական քարտի համարը կամ նշում անձի՝ սոցիալական քարտից հրաժարվելու մասին տեղեկանքը, էլեկտրոնային փոստի հասցեն, բնակության, հաշվառման վայրի հասցեն,<br>4)պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ: | |
| 4. **Գործադիր մարմնի ղեկավարի տվյալների փոփոխության պետական գրանցում** | 10000 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160719) | Անմիջապես<br><br>1) դիմում,<br>2)պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ: | |

**Բաժնետիրական ընկերության փոփոխությունների պետական գրանցում**

| | | | |
|---|---|---|---|
| 1. **Կանոնադրության փոփոխության պետական գրանցում** (այդ թվում պայմանավորված՝<br>1) անվանման,<br>2) բաժնետիրոջ տվյալների (միակ բաժնետեր ունենալու դեպքում),<br>3) իրավաբանական հասցեի,<br>5) կանոնադրական կապիտալի և այլ փոփոխություններով) | 10000 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160719) | Երկու աշխատանքային օր<br><br>1) դիմում,<br>2) կանոնադրության փոփոխությունները, լրացումները կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին իրավասու մարմնի որոշումը,<br>3) կանոնադրության փոփոխությունները կամ լրացումները (կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը),<br>4) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ:<br><br><<Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ | Կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում դիմողը ներկայացնում է նաև ներդրումը հավաստող փաստաթղթերը: |

| | | | |
|---|---|---|---|
| | | ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի 66-րդ հոդվածով սահմանված դեպքերում ներկայացվում են նաև նշված հոդվածով նախատեսված փաստաթղթերը (իրական շահառուների վերաբերյալ հայտարարություն): | |
| 2. **Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխության պետական գրանցում** | 10000 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160719) | Երկու աշխատանքային օր<br><br>1)դիմում,<br>2)իրավաբանական անձի լիազորված մարմնի որոշումը (որոշումները) պետական գրանցում ստացած գործադիր մարմնի նախկին ղեկավարի լիազորությունները դադարեցնելու և գործադիր մարմնի նոր ղեկավար նշանակելու մասին,<br>3)գործադիր մարմնի նոր ղեկավարի մասին տեղեկություններ՝ անունը, ազգանունը և անձնագրային տվյալները, սոցիալական քարտի համարը կամ նշում անձի՝ սոցիալական քարտից հրաժարվելու մասին տեղեկանքը, էլեկտրոնային փոստի հասցեն, բնակության, հաշվառման վայրի հասցեն,<br>4)պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ: | - |
| 3. **Գործադիր մարմնի ղեկավարի տվյալների փոփոխության պետական գրանցում** | 10000 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160719) | Անմիջապես<br><br>1) դիմում,<br>2)պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ: | - |
| **Արտադրական կոոպերատիվի փոփոխությունների պետական գրանցում** | | | |
| 1.**Կանոնադրության փոփոխության պետական գրանցում**<br>(այդ թվում պայմանավորված՝<br>1) անվանման,<br>2) անդամի տվյալների,<br>3) իրավաբանական հասցեի և այլ փոփոխություններով) | 10000 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160719) | Երկու աշխատանքային օր<br><br>1) դիմում,<br>2) կանոնադրության փոփոխությունները, լրացումները կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին իրավասու մարմնի որոշումը,<br>3) կանոնադրության փոփոխությունները կամ լրացումները (կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը),<br>4) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ:<br><br><<Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված | |

| | | | |
|---|---|---|---|
| | | ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի 66-րդ հոդվածով սահմանված դեպքերում ներկայացվում են նաև նշված հոդվածով նախատեսված փաստաթղթերը (իրական շահառուների վերաբերյալ հայտարարություն): | |
| 2.**Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխության պետական գրանցում** | 10000 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160719) | Երկու աշխատանքային օր<br><br>1)դիմում,<br>2)իրավաբանական անձի լիազորված մարմնի որոշումը (որոշումները) պետական գրանցում ստացած գործադիր մարմնի նախկին ղեկավարի լիազորությունները դադարեցնելու և գործադիր մարմնի նոր ղեկավար նշանակելու մասին,<br>3)գործադիր մարմնի նոր ղեկավարի մասին տեղեկություններ՝ անունը, ազգանունը և անձնագրային տվյալները, սոցիալական քարտի համարը կամ նշում անձի՝ սոցիալական քարտից հրաժարվելու մասին տեղեկանքը, էլեկտրոնային փոստի հասցեն, բնակության, հաշվառման վայրի հասցեն,<br>4)պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ: | - |
| 3. **Գործադիր մարմնի ղեկավարի տվյալների փոփոխության պետական գրանցում** | 10000 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160719) | Անմիջապես<br><br>1) դիմում,<br>2)պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ: | - |
| **Լիակատար ընկերակցության փոփոխությունների պետական գրանցում** | | | |
| 1.**Կանոնադրության փոփոխության պետական գրանցում**<br>(այդ թվում պայմանավորված՝<br>1) անվանման,<br>2) լիակատար անդամի տվյալների,<br>3) իրավաբանական հասցեի և այլ փոփոխություններով) | 10000 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160719) | Երկու աշխատանքային օր<br><br>1) դիմում,<br>2) կանոնադրության փոփոխությունները, լրացումները կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին իրավասու մարմնի որոշումը,<br>3) կանոնադրության փոփոխությունները կամ լրացումները (կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը),<br>4) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ:<br><br><<Իրավաբանական անձանց պետական գրանցման, | - |

| | | | |
|---|---|---|---|
| | | իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի 66-րդ հոդվածով սահմանված դեպքերում ներկայացվում են նաև նշված հոդվածով նախատեսված փաստաթղթերը (իրական շահառուների վերաբերյալ հայտարարություն): | |
| 2.**Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխության պետական գրանցում** | 10000 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160719) | Երկու աշխատանքային օր<br><br>1)դիմում,<br>2)իրավաբանական անձի լիազորված մարմնի որոշումը (որոշումները) պետական գրանցում ստացած գործադիր մարմնի նախկին ղեկավարի լիազորությունները դադարեցնելու և գործադիր մարմնի նոր ղեկավար նշանակելու մասին,<br>3)գործադիր մարմնի նոր ղեկավարի մասին տեղեկություններ՝ անունը, ազգանունը և անձնագրային տվյալները, սոցիալական քարտի համարը կամ նշում անձի՝ սոցիալական քարտից հրաժարվելու մասին տեղեկանքը, էլեկտրոնային փոստի հասցեն, բնակության, հաշվառման վայրի հասցեն,<br>4)պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ: | - |
| 3. **Գործադիր մարմնի ղեկավարի տվյալների փոփոխության պետական գրանցում** | 10000 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160719) | Անմիջապես<br><br>1) դիմում,<br>2)պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ: | - |
| 3. **Գործադիր մարմնի ղեկավարի տվյալների փոփոխության պետական գրանցում** | 10000 ՀՀ դրամ պետական տուրք (հաշվեհամար՝ 900005160719) | Անմիջապես<br><br>1) դիմում,<br>2)պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ: | - |
| **Գյուղատնտեսական կոոպերատիվի փոփոխությունների պետական գրանցում** | | | |
| 1.**Կանոնադրության փոփոխության պետական գրանցում**<br>(այդ թվում պայմանավորված՝<br>1) անվանման, | 10000 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160719) | Երկու աշխատանքային օր<br><br>1) դիմում,<br>2) կանոնադրության փոփոխությունները, լրացումները կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին | - |

| | | | |
|---|---|---|---|
| 2) անդամի տվյալների,<br>3) իրավաբանական հասցեի և այլ փոփոխություններով) | | իրավասու մարմնի որոշումը,<br>3) կանոնադրության փոփոխությունները կամ լրացումները (կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը),<br>4) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ:<br><br><<Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի 66-րդ հոդվածով սահմանված դեպքերում ներկայացվում են նաև նշված հոդվածով նախատեսված փաստաթղթերը (իրական շահառուների վերաբերյալ հայտարարություն): | |
| 2.**Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխության պետական գրանցում** | 10000 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160719) | Երկու աշխատանքային օր<br><br>1)դիմում,<br>2)իրավաբանական անձի լիազորված մարմնի որոշումը (որոշումները) պետական գրանցում ստացած գործադիր մարմնի նախկին ղեկավարի լիազորությունները դադարեցնելու և գործադիր մարմնի նոր ղեկավար նշանակելու մասին,<br>3)գործադիր մարմնի նոր ղեկավարի մասին տեղեկություններ՝ անունը, ազգանունը և անձնագրային տվյալները, սոցիալական քարտի համարը կամ նշում անձի՝ սոցիալական քարտից հրաժարվելու մասին տեղեկանքը, էլեկտրոնային փոստի հասցեն, բնակության, հաշվառման վայրի հասցեն,<br>4)պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ: | - |
| 3. **Գործադիր մարմնի ղեկավարի տվյալների փոփոխության պետական գրանցում** | 10000 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160719) | Անմիջապես<br><br>1) դիմում,<br>2)պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ: | - |

## Առևտրային կազմակերպությունների լուծարման գործընթացի մասին տեղեկությունների գրառմամբ պայմանավորված պետական գրանցում

| | | | |
|---|---|---|---|
| **Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լուծարման գործընթացի մասին տեղեկությունների գրառմամբ պայմանավորված պետական գրանցում** | 10000 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160719) | Երկու աշխատանքային օր<br><br>1) դիմում.<br>2) իրավաբանական անձի լուծարման մասին իրավասու մարմնի որոշումը.<br>3) ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հայտարարություն տեղակայելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, ինչպես դրանք սահմանված են «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքով.<br>4) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ:<br><br>Այլ մարմնի կողմից գրանցված իրավաբանական անձի լուծարման դեպքում լուծարման գործընթացում գտնվելու մասին գործակալության կողմից գրառում կատարելու համար իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարը կամ օրենքով կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված մարմինը կամ նրանց լիազորած անձը գործակալություն են ներկայացվում՝<br>1) գրանցող մարմնի տված գրանցման վկայականը (պետական գրանցման մասին որոշումը կամ պետական գրանցումը հավաստող այլ փաստաթուղթ).<br>2) իրավաբանական անձի հիմնադիր փաստաթղթերը.<br>3) օրենքով նախատեսված համապատասխան փաստաթղթերը: | - |
| **Բաժնետիրական ընկերության լուծարման գործընթացի մասին տեղեկությունների գրառմամբ պայմանավորված պետական գրանցում** | 10000 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160719) | | - |
| **Արտադրական կոոպերատիվի լուծարման գործընթացի մասին տեղեկությունների գրառմամբ պայմանավորված պետական գրանցում** | 10000 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160719) | | - |
| **Լիակատար տնտեսական ընկերակցության լուծարման գործընթացի մասին տեղեկությունների գրառմամբ պայմանավորված պետական գրանցում** | 10000 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160719) | | - |
| **Գյուղատնտեսական կոոպերատիվի լուծարման գործընթացի մասին տեղեկությունների գրառմամբ պայմանավորված պետական գրանցում** | 10000 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160719) | | - |

<table>
<tr><th colspan="4">Առևտրային կազմակերպությունների լուծարման պետական գրանցում</th></tr>
<tr><td>Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լուծարման պետական գրանցում</td><td>10000 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160719)</td><td rowspan="6">Մեկ աշխատանքային օր<br><br>1) դիմում.<br>2) իրավաբանական անձի մասնակիցների կամ դրա համար կանոնադրությամբ լիազորված իրավաբանական անձի մարմնի որոշումը լուծարման հաշվեկշիռը հաստատելու մասին.<br>3) լուծարման հաշվեկշիռը.<br>4) իր կողմից տեղեկանք՝ «Արխիվային գործի մասին» ՀՀ րենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների կատարման մասին.<br>5) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ:<br><br>Սնանկության հետևանքով լուծարված իրավաբանական անձի լուծարման պետական գրանցման համար ներկայացվում են դիմում, իր կողմից տեղեկանք՝ «Արխիվային գործի մասին» ՀՀ րենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների կատարման մասին, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը:</td><td rowspan="6">Գործակալությունը մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների ցանկում ներառված իրավաբանական անձի կողմից լուծարման մասին դիմում ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, հարցում է ուղարկում հանձնաժողովին՝ հանձնաժողովի կողմից տվյալ իրավաբանական անձի նկատմամբ հարուցված և չավարտված վարչական վարույթի, ինչպես նաև հանձնաժողովի նկատմամբ պարտավորությունների բացակայությունը հավաստելու վերաբերյալ: Հարցումն ուղարկվում է ստացումը հաստատելու հնարավորություն տվող էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունն ապահովող համակարգի միջոցով: Հանձնաժողովը պատասխանում է հարցմանն այն ուղարկելու օրվանից հետո՝ 10 օրվա ընթացքում: Սույն կետով նախատեսված հարցմանը սահմանված ժամկետում չպատասխանելը դիտվում է որպես հանձնաժողովի կողմից տվյալ իրավաբանական անձի նկատմամբ հարուցված և չավարտված վարչական վարույթի, ինչպես նաև հանձնաժողովի նկատմամբ պարտավորությունների բացակայության հավաստում<br>Գործակալությունը լուծարման գրանցում կատարելու մասին դիմում ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հարցում է ուղարկում հարկային մարմին՝ պետական բյուջեի և սոցիալական ապահովագրության գծով իրավաբանական անձի պարտավորությունների բացակայությունը հավաստելու վերաբերյալ:</td></tr>
<tr><td>Բաժնետիրական ընկերության լուծարման պետական գրանցում</td><td>10000 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160719)</td></tr>
<tr><td>Արտադրական կոոպերատիվի լուծարման պետական գրանցում</td><td>10000 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160719)</td></tr>
<tr><td>Լիակատար տնտեսական լուծարման պետական գրանցում</td><td>10000 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160719)</td></tr>
<tr><td>Գյուղատնտեսական կոոպերատիվի լուծարման պետական գրանցում</td><td>10000 ՀՀ դրամ (հաշվեհամար՝ 900005160719)</td></tr>
<tr><td></td><td></td></tr>
</table>

| | | | |
|---|---|---|---|
| | | | Հարցումն ուղարկվում է ստացումը հաստատելու հնարավորություն տվող էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունն ապահովող համակարգի միջոցով: Հարկային մարմինները պատասխանում են հարցմանը այն ստանալու օրվանից հետո՝ 20 օրվա ընթացքում: Հարկային մարմինների կողմից սույն կետով նախատեսված հարցմանը սահմանված ժամկետում չպատասխանելը կամ այլ պատասխան (բացի պարտավորությունների առկայությունից և դրանց հստակ չափից) ուղարկելը դիտվում է որպես պետական բյուջեի և սոցիալական ապահովագրության գծով լուծարվող իրավաբանական անձի պարտավորությունների բացակայության հավաստում:<br><br>Եթե լուծարման համար դիմած անձը փաստաթղթերի հետ ներկայացնում է նաև հարկային մարմնի տված տեղեկանք՝ պետական բյուջեի հանդեպ հարկերի և սոցիալական ապահովագրության գծով պարտավորությունների բացակայության մասին՝ տրված լուծարման հաշվեկշիռը հաստատելու օրը կամ ավելի ուշ, հարցումը հարկային մարմին չի ուղարկվում: |